

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 67-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝

«3. Օրենքի նախագիծն Աշխատակարգով սահմանված կարգով շրջանառության մեջ դրվելուց հետո՝ պատգամավորի և խմբակցության նախաձեռնության դեպքում՝ հեղինակը, իսկ քաղաքացիական նախաձեռնության դեպքում՝ Աշխատակազմը ապահովում են նախագծի հանրային քննարկումը:

Հանրային քննարկման իրականացման կարգը սահմանվում է Ազգային ժողովի որոշմամբ:»:

Հոդված 2. Օրենքի 77-րդ հոդվածի 2-րդ մասում «մեկամսյա» բառը փոխարինել «քառասունհինգօրյա» բառով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը: